ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆԱ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 08-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- ✓ իրականացրել եմ Տեսչական մարմնի ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության աշխատանքներ.
- ✓ իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարությունից, նախարարություններից և այլ մարմիններից ստացված օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրման աշխատանքներ.
- ✓ իրականացրել եմ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիմումներում բարձրացված հարցերի ուսումնասիրության և դրա հիման վրա համապատասխան պատասխանատու ստորաբաժանումներին առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև դրանց վերաբերյալ պատասխանների նախագծերի կազմման աշխատանքներ.

- ✓ իրականացրել եմ Տեսչական մարմնի ստորաբաժանումներին իրավական աջակցության և խորհրդատվության տրամադրման աշխատանքներ.
- ✓ իրականացրել եմ Տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության դատական և այլ պետական մարմիններում Տեսչական մարմնի շահերի պաշտպանության իրականացմանն ուղղված անհրաժեշտ փաստաթղթերի կազմման աշխատանքներ.
- ✓ իրականացրել եմ Տեսչական մարմնի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպության իրավական գործընթացների պատշաճ իրականացման նկատմամբ մեթոդական ղեկավարման աշխատանքներ.
- ✓ մասնակցել եմ Վարչության իրավասության սահմաններում Տեսչական մարմնի կողմից իրականացվող պետական վերահսկողությանը և վարչական վարույթներին, ինչպես նաև իրականացրել եմ դրանց առնչվող փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման աշխատանքները:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ԼԻԱՆԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

10.06.2024թ.